

Վ.ԱՐՁՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՈՐ"

ՆԱԲԱԿ ԿԱՄ ՈՅԻԸ ԲՂԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԵՏՐ ԵՒ ՈՍԿԱՆՆԻ ԿՈՍ  
Վարչութիւն ՆՈՐ ՈՐ Բազմի  
ԳԱՀԻՐԻ

Direction du journal  
NOR-OR  
Caire

Չեռագրիւնքն եւ չեն դարձուիր,  
ԱՐՏՈՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆԻՆԻ

# ՆՈՐՈՐ

Լ Ր Ա Գ Ի Ր  
ԱԶ Գ Ա Յ Ի Ն, Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱՐԱԹՅՈՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԳՈՐԹԻՒՆ

Լ Գ Ի Գ Ն Ս	
ԳՐԸ ՈՂՁ	
Գանձիւրի համար	Տարեկան 50
» » վեցամսեայ	30
Շրջակայից »	Տարեկան 60
» » վեցամսեայ	35
ԱՐՏԱՍՏՐԱՆԻ ՇԱՐԱՐ	
Տարեկան . . . . .	Ֆրանկ 18
Վեցամսեայ . . . . .	» 10
ԳՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՂՍՈՍԻ ՇԱՐԱՐ	
Տարեկան . . . . .	Բուրի 7
Վեցամսեայ . . . . .	» 4
ԲԱՃԱՆՈՐԳՈՐԹԻՒՆԸ ԿԱՆԻՍԿ ԵՒ ԵՒ ԲՂԲԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԵՐԸ ԹԵՐԻՒՆ ՎԱՐՉՈՒՔԵԱՆ ՎՊԱԿ	

ՇԱՐԱՐ 7/20 ԱՊՐԻԼ 1901

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 83

## ՏՆՈՐՅՆԵՔԸ ՍԵՐ ՍԷՋ

Տնօրհանները մեր մէջ այսօր առեւտրական գործերէ վար չեն քնար. ով որ հակառակը կը պնդէ ազատ է պատասխանելու:

—Տէր Հայր, Չաստիկ է, ինչո՞ւ չես գար մեր տունն ալ օրհնել, կ'ըսէ աղքատին մէկը անցեալները Տ. Մամբրէին:

—Չաւա՛կս, ես քեզ նոր կը ճանչնամ. ինչ և իցէ, հիմակ մէկ երկու ծուխեր ունիմ, անոնց այցելում ու վերադարձիս կուգամ, եթէ ես ալ չի կրնամ գալ պանդուխտ քահանան կը զրկեմ:

Բարեպաշտ մարդը վայրկեան մը կը խորհի թէ՛ ինչ ըսել է, տնօրհանէն ալ միթէ կարգով է:

Քանի մ'օր կ'անցնի, ո՛չ Տ. Մամբրէն կ'երևայ, ո՛չ ալ պանդուխտ քահանան:

Չ'երևանա՞նուն պատճառը, որովհետեւ հոս ես առեր թէ այդ մարդը տնօրհանէք վճարելու կարող չէ:

Սասնի օրինակներ շատ կրնամ տալ, բայց հիմակուհի մայ կը վերապահեմ, և միմիայն խղճի մտօք կը կրկնեմ թէ՛ արդարեւ տնօրհանները մեր մէջ չարչուի գործեր դարձած են, նամանաւանդ անխիղճ և անպարտաճանաչ քահանաներու համար:

Գիտեմ թէ՛ տնօրհանէք քահանային նիւթականին հետ մեծ առնչութիւն ունի, և չեմ հակառակիր որ քահանաները տնօրհանէքի փոխարէն փող սպասեն իրենց ծուխերէն, քանի որ սովորութիւն մ'է ի վազուց ընդունուած, բայց չեմ ալ ընդունիր որ քահանայ մը իրեն տրուած այս թոյլտուութիւնէն շփացած չարաչար գործածէ իրեն յանձնուած պաշտօնը:

Պէտք է գիտնանք որ Սրբազան Հայրապետները այս տնօրհանէքը հաստատած են ո՛չ թէ հասոյթի մը աղբիւր ստեղծած ըլլալու համար մեր քահանայներուն, հապա աւելի աւելի մը հայթայթած ըլլալու անոնց, որ իբր հոգեւոր հովիւ ժողովրդին, իբր անոր ցաւերուն բժիշկը, տարին գունէ մի քանի անգամ մտնելով էն հարուստէն սկսեալ մինչև յետին աղքատին տունը, վերահասու ըլլան ըն-

տանեկան խաւերու անցուդարձին, տեղեկագրին դայն, և եթէ տեսնեն թերութիւններ ուղղեն ի հարկին:

Բայց ո՛ր են այն պարտաճանաչ քահանայները և հովիւները: Մենք չենք տեսներ ո՛չ պարտաճանաչ քահանայներ, ո՛չ ալ շնորհքով խելքերնին զուլանին ազգային վարիչներ, որ ըլլան զիտակից իրենց պաշտօնին և զիտան մէկզմէկէ օգտուի:

Մտաբերութիւն, թուլութիւն, շահախնդրութիւն, ահա՛ այս է անոնց դրամադրութիւնը:

Թերեւս առարկուի թէ ինչո՞ւ այսքան խորապահանջ ըլլանք մեր քահանայներէն, և կամ ազգային վարիչներէն, քանի որ մեր ձեռքովը կ'ընտրենք մեր քահանայները և մեր ազգային վարիչները:

Այդ ճիշդ է, բայց ոչ ամեն պարագայի մէջ. քանի որ մեր նիւթը տընօրհանէր վրայ կը դառնայ կոր, հարցուցէք թէ մեր քահանայները միթէ չեն զիտեր որ տնօրհանէքը, վարձք է եթէ ոչ մեզ, գէթ անանկ բարեպաշտին համար:

Սասնի բաներ գիտնուլու համար մարդս քահանայ ըլլալու պէտք չունի, կարծեմ:

Շատ լաւ, այս մասին խտապահանջ չըլլանք ու ներողամտ գրտնուիք, բայց ուրիշ պարագայ մը կայ, անոր ինչ պիտի ըսէք, տեսնեմ:

Տ. Մամբրէն, քարոզ կը կարգայ կարգ մը մարդիկներու որ տնօրհանէք չեն կրնար վճարել ըսեալ մը — քանի որ «չարչու» գործ է ըլլիք, ըսեալէն պակաս չ'ըլլաւ — ու կ'ըսէ:

—Ինչ պիտի ընէք տնօրհանէք մընօրհանէք, անդին հարուստներուն տունը այսքան տնօրհանէք կ'ընենք տարին, դարձեալ մեռնողը մեռնող, կըտուողը կըտուող է:

Ահաւասիկ նմոյշ մը մեր քահանայներու բարքէն, զոր հրապարակ չպիտի հանէի, բայց հանեցի. վարանելով որ մի գուցէ զիտ մեղադրեն թէ խտապահանջ եմ...

Պիտի խնդրէի որ մեր քահանայները փոխանակ ցաւելու մեր զիտողութիւններէն օգտուէին, նամանաւանդ Տ. Մամբրէն որ կերպով մը աւագ-երէցի պաշտօնը կը վարէ այսօր և որմէ պատկառանք կը սպասենք, ոչ թէ գայթակղալի արարք:

## ԱՐԴԻ ՆՃԱՆԱԹՅՈՒԹԻՒՆՔ

Ստոյգ և նախ որ ամուսնութեան զաղափարը, այնպէս ինչպէս որ մենք կ'իմանանք, այսինքն այդ մարդու մը մէկ կամ աւելի որոշ կ'ինքնու հետ կամ կ'ին մարդու մը մէկ կամ աւելի մարդերու հետ միութիւնը, ի մի բան միակնութիւնը, բազմակնութիւնը կամ բազմայրութիւնը ամեն ժամանակ գոյութիւն չէ ունեցած:

Նախապատմական ժամանակաց մէջ, երբ մարդիկ, հասարակաց պաշտպանութեան հարկին ստիպմամբ խուճը խուճը հաւաքուած, քարայրներու մէջ կ'ապրէին, երբ իրենց ազգական կապիկներուն նման, սէրը անոնց մէջ նիւթական սխորձակ մըն էր միայն, խառնութիւնը միութեան միակ եզրանակն էր: Կ'իմենք խուճիկն սխորձակութիւնն էին: Ըզձանքին խայթոցը անասնական զարգացումը ամուսնական գործին մէջ միակ օրէնքն էր:

Ստոյգն փապարհներու մէջ ուր կը բաշտակին վայրի զապանաց զմ'ցերիկը մշուած վասնզայից պատերազմներէն յետոյ, քարայրներու մարդերը, մարդկութեան այդ նախահայրերը, կ'երթային երկրորդական հանդիսար կը ճաշակէին իրենց հասարակաց ընկերակցութեան զիբը, անոնց հետ կը բաժնէին իրենց սրտին արգիւնքը և խառն ի խառն կը զստացնէին իրենց սեռական բնազդները:

Եւ այդ խառն սերերէն ծնած զաւակները խուճիկն զաւակները կ'ըլլային: Հայրութիւնը այն ժամանակ անձնօթ զգացում մըն էր. բոլոր այրերը անխորհր հայր էին: Այդ քաստին մէջ, միայն մայրը կրնար ճանչնալ իր որովայնին պատուը: Ահա՛ այսպէս հաստատուեցաւ մայրական իրաւունքը, որ կը կոչուի կնապետութիւն (կամ կնոջ իշխանութիւն):

Մարդկութեան պատմութեան մէջ շատ վերջերը միայն, քանի որ նախնական մարդուն կարողութիւնները կը կատարելագործուէին և անոր զգացումները կը նրբանային, կնոջ մը տարամբժ սիրացման զաղափարը ծագեցաւ:

Այս ինչ կ'ենք այրերէն մէկուն զգայաբանները հրապարակ և անոր նախնարածը եղաւ: Առնական սեռականութիւնը մարմին առաւ: Հրապարակած այրը ստաւ այդ կ'ենք, կամքով կամ բռնի, անոր զրկախառնութեանցը նախանշայոյց, և արգիւնքով զանոնք իր համասեաններուն: Ուրիշներ ալ անոր հետեւեցան: Այդ օրէն սկսեալ, ամուսնութեան օրէնքը հնարուեցաւ:

Եւ վարժութիւնը ծնունդ առաւ, որ աւել-

ցուց, տեղափակեց և նրբացուց զգայութիւնները: Չաւաններուն միասին տարուած խորամբըրը հայրական զգացումը զարգացուցին և արուխն առ կէն և փոխադարձ եղած հրապարակ մեծցուցին:

Քանի որ զաղափարութիւնը իր բարիքները կը ծառայէ մարդկութեան վրայ և զայն կը նրբացնէ, կը տեսնենք որ այն տան դեռ սաղմնային վիճակի մէջ եղող սիրոյ այդ զգացումը կը զարգանայ և կը մարդուի: Անն և կնոջ կապերը կ'ամրապնդուին. և անոնց զրկախառնութիւններէն եղած տխր կակը կը տեսնէ որ անոնց խնամքները կը զուգուին և իրեն կը շոյալուին:

Այն ժ մանակէն սկսեալ ամուսնութիւնը իր վերջնական նոտիքագործումը բնագումար էր:

Խառնութեան վիճակին, զոր զաղափարը կըրթութեան առաջին շունչը շատ հետեւն առած տարած էր, տեղը բռնած էր նախ և առաջ միակնութիւնը:

Բայց բազմայրութի պատճառներով, մարդկային բնութեանէն երբեք անկախ ազգացութեանց տակ, ամուսնութիւնը որոշ երկրորդական մէջ զանազան ձևեր առած էր:

Կնապետները, տեսակի մը մէջ հաւասար թուով, կամ աւելի արու և կամ աւելի կը զանուելուն համեմատ միակնութեան, բազմակնութեան կամ բազմայրութեան կը հետեւին: Այս մասին իրենց յարաբերութիւնները որոշ և անփոփոխ օրէնքներով կը կանոնաւորուին:

Խ. ՋՕՂԱՊ ՅԱՐԳՄ. Յ. ՍԷՔԵԱՆ (Շարունակելի)

## ՔԱՂԱՔԱՎԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՐԱՆՍՎԱԼ

Պատերազմի դաշտը՝ հեռագիրներուն նայելով, իր ոգեւորութիւնը կորսնցուցած կ'երևի Պօէրներու կողմէն, քանի որ Գրիգորիկէր, Շիփրըս և ուրիշներ Քափի սահմանին մէջ ասդին անգին կը չըլլին, պատերազմէն խոյս տալով: Բայց և այնպէս մինչև որ տոյն վերջինները (Պօէրները) անձնատուր չըլլան կամ ունէ հաշտութեան պայման չի կնքուի երկուստեք, պատերազմը վերջացած չի համարուիր:

Վերջին հեռագրի մը համեմատ՝ Պօէրներու պետերը ժողովուրդ են խորհրդակցելու համար հաշտութեան պայմաններուն վրայ: Միւս կողմէն Տրվէթ՝ Քափի ընդհանուր ազգային ժողովոյ անգամ, երբ տարի բանտարկութեան զատապարտուեր է իբր մատնիչ:

ԻՍԼԱՍ ԿԻՆԸ

1.

Թէ ինչու Եւրոպացի կինը կը պտտի դէմքը բաց, կը պարէ կը փարի մարմինը մինչև ստինքները կիտարաց ու մահմետական կինը ընդհակառակը նամէհրաւութեան դասապարտուած կը հարկադրուի ծածկել իր երեսն իսկ քօղով մը որու պորոս անունը կուտանք, և իր մարմինը՝ տեսակ մը վերարկուով զոր բառազէտները ճեղքած անունով մկրտած են, և որուն Սրաբացիք խաղաղաւ անունը կուտան:

Ահաւասիկ ինչպէս մը որուն վրայ պիտի վիճեմ և լուսաբանեմ, ինչպէս որ սակեց ամիս մը առաջ վիճեցան ուրիշներ, իսկ մի կողմէ կը թուրքեան վրայ, որուն ինչպէս գիտենք առիթ տուաւ իմին պէյ Գասրմի հրատարակութիւնը:

Չը մտնամ դիտել տալու թէ պորոսի և եւալմախի մէջ մեծ տարբերութիւն կայ: Պորոսն սև շղարշ մըն է զոր կը զործածեն արար կիները ինչպէս հոս Եգիպտոս, որուն ներքև կնոջ դէմքը բոլորովին կը սքողուի: Իսկ եւալմախը ընդհանրապէս սպիտակ շղարշ մըն է, զոր ինչպէս բիշ յետոյ պիտի տեսնենք, կը զործածեն թրքուհիները, և որուն մէջտեղէն կնոջ դէմքը ընդհակառակը արեգակի պէս կը տեսնուի:

Եթէ վայրկեան մը ընդունինք թէ կրօնքը պատուիրած է որ մահմետական կինը իր դէմքը սքողէ, ուրեմն ինչպէս կրնայ ըլլալ որ թուրք կիները թոյլտուութիւն կ'ունենան դէմքերնին ցոյց տալու եւալմախին մէջէն: Իսկ եթէ կրօնքը ատանկ պատուէր մը ըրած չէ, արար կիները ինչ հիման վրայ դէմքերնին կը ծածկեն այնքան խնամօք:

Բնական է թէ կրօնքը թրքուհիին և արարին համար զատ զատ կանոններ չի կրնար դնել:

Ուրեմն տեսնենք թէ ո՞րն է ճիշդը:

Արարները կ'ըսեն թէ մահմետական կրօնքը այնպէս կը արամադրէ որ կիները սքողեալ ըլլան (համահրամ) դէմքով:

Բայց ո՞ր են այդ կրօնական տրամադրութիւնները զոր մենք չենք տեսներ: Իրաւ է թէ Գուրանի մէջ կը տեսնուին ինչ ինչ հատուածներ, բայց մենք չենք հանդիպած այնպիսի հատուածի մը որ նամէհրամութիւնը հաստատած ըլլայ մեր տեսածին պէս:

«Սուրաթ-է-Ե-Նուր»-ի մէջ հաստատած մը կայ որ կ'ըսէ:

«Կը պատուիրեմ կանանց որ իրենց արտաքին արգելադրել և ստինքնին ծածկեն քօղով մը օտարներու առջև, ի բաց առեալ իրենց ամուսիններուն, տղոցը և կամ իրենց ամուսիններուն տղոցը, իրենց եղբայրներուն և կամ իրենց եղբոր որդիներուն, իրենց քեւորըղիներուն և կամ այն տղայոց ու ըրոնց զղայումը զեւ արթնցած չէ: Բայց ասոր կանայք շարժելու չեն իրենց օտարը այնպիսի եղանակաւ մը որ արտաքին վարդենքնին տեսնուի»:

Գուրանի այս աստուածը կուգայ հաստատել նաև Ալլու Հանաֆի իսլամիստին էն մեծ վարդապետը, որուն արձակած վճիռները, տուած կարծիքը և մեկնութիւնները թէ՛ թուրքերը և թէ՛ Եգիպտոսի մէջ ընդունուած են պաշտօնապէս:

Ալլու Հանաֆի կ'ըսէ թէ՛ «Երբևէ մարդիկ կրնան կնկան մը դէմքը և ամբ տեսնել»:

Ուրեմն կրնանք հետեցնել թէ՛ իսլամ կինը միմիայն իր մարմինը պէտք է ծածկէ օտարներու առջև, իսկ դէմքը, ամբ և ոտուքները երբէք: Ըսել է թէ իսլամ կնոջ դէմքը պորոսով ծածկելը օրէնքի և կամ կրօնքի վրայ հիմնուած բան մը չէ, որքան սովորութիւն մը զարձած է զարեւու հարավման ընթացքին մէջ: Մինչև իսկ ոմանք կ'ըսեն թէ պորոսն ըրիստոսնայիսիւնի փոխ առած են մահմետականները:

Աւելի եւալմախն է որ ընդունած է մահմետական կրօնքը, և զոր կը զոր-

ծածկն թրքուհիները, որուն մէջ կնոջ գլուխը, մազերը, կէս մը այտը, վիզը և կուրծքը կը ծածկուին ի բաց առեալ դէմքը՝ որ շրջանակի մը մէջ գրուած պատկերի մը նման տեսանելի կ'ըլլայ:

Եգիպտոսի մէջ Արաբացի կնոջ դաստիարակութեան և քաղաքակրթութեան կուսակից գանուող արդի դէպքերը կ'ըսեն թէ՛ բանի որ կրօնքը արգելք չի տեսներ մահմետական կնոջ որ իր դէմքը ցուցադրէ, ինչպէս համար ուրեմն չի կրնան մեր արար կիներն այլ թրքուհիներու պէս եւալմախով պոտիլ, և չի թօթափեն պորոսի անասնայի լուծը, որուն մէջ թիթ բերան երես ամեն ինչ կը ծածկուին ի բաց առեալ սիրուն աչուքները:

Բնական է թէ սովորութիւն մը որ արմատացած է, մէկէն ի մէկ չի կրնար յեղաշրջուիլ, բայց եթէ ժամանակի հարավման ընթացքին մէջ, յորում կուգայ օգնել նաև քիչ շատ քաղաքակրթութեան տարածումը և աստիճանաւոր ընտելացումը յետագէ՛մ դասակարգին:

Այսօր ա՛ռ արար կնոջ մէջ պորոսն և տուր անոր թրքուհիին եւալմախը, պիտի տեսնես որ մէկ քանի օրուան մէջ հարելուսը մոխալմախներ (գոթթուսմախիտ) պիտի գան լեցնել դասարանի արձանագրութեանց էջերը: Ինչու որ անքաղաքակրթ և անդաստիարակեալ մարդիկ բնու չեն ակնածիլ պախարակուել:

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ

Մեզի կը ծանուցուի նշանախօսութիւնը Տիար Կարապետ Մեսրոպեանի ընդ Օր. վարդանոյշ Խէրաբէկեանի, որ անդի ունեցաւ անցեալ երկու շաբթի զեշեր Տիարը Շահրօզեան եղբարց յարկին մէջ, ի ներկայութեան երկու կողմի ծանօթներու:

Տ. Կ. Մեսրոպեան պարկեշտ և յառաջդիմասէր երիտասարդ մ'է, Ազգայնականութեան ծանօթ տեղւոյն «Լուսարան-Մատենադարան»-ի ընկերակցութեան մէջ իր ցոյց տուած կըրթասիրական գործունէութեամբը:

Մեր շնորհատուութիւնները:

ուսին նիստին մէջ՝ քաղաքական ժողովին քննած տեղեկագրերը մտիկ ընելով եղած ընտրութիւնները և Երեսփոխանաց իշխանութիւնը կը վաւերացունէ. որով Ընդհանուր ժողովը ըստ օրինի կազմուած կ'ըլլայ: Ընդհանուր ժողով կրնայ զուսարուիլ, երբ կոտորակուողոյց Երեսփոխանաց մեծագոյն մասը ընտրուած ըլլայ, առանց ըստ պատելու զաւտական Երեսփոխանաց ընտրութեան վարձանին՝ որոց լուրը մէկ կողմէն կոտորակուողոյցի հասնելու վրայ կ'ըլլայ:

Յօդ. 83. Եթէ մէկը բանի մը թաղեալու կամ դաւանելու կողմէն ընտրուած ըլլայ, ինք կ'որոշէ ո՞ր թաղին կամ ո՞ր դաւանին Երեսփոխանութիւնն ընդունիլը, և եթէ ինք չորոշել, Ընդհանուր ժողովը իրեն կ'որոշէ:

Յօդ. 84. Երեսփոխանաց անուան ցուցակը Ընդհանուր ժողովոյ սրահին մէջ կախուած պիտի մնայ՝ այդ ու բէնի կարգաւ շինուած. և իր բարանչիլը անուան առջև պիտի նշանակուի հրատարակ, վախճանում, և այլ ինչ որ պատահի: Այս ցուցակը երկու տարին անգամ մը պիտի նորոգուի:

Չ Ա Ր Ը

Անառ ձմեռ Չարը սուսուտեան ժամը 8 ու կէսին կ'արթնայ, անմիջապէս կը լուսացուի ու սովորական թուալէթը կուտայ: Ժամը 10-11 թեթեւ ճաշ մը կ'ընէ ու յետոյ փոքր ինչ հանգիստ: 11էն 1 դաստենակի աշխատութիւնները կը սկսի, նախարարներուն տեղեկագրերները, և առաջարկուած օրէնքներու ծրագրիները աչքէ կ'անցունէ, ստորագրուելիք թուղթերը կը ստորագրէ: Աշխատութեան միջոցին, Չարը թէյ թէյի վրայ կը խմէ, շատ բիշ անգամ կ'առնէ զինի և կամ սենյակի:

Ժամը 1էն մինչև չորս ընտանեացը հետ ժամանակ կ'անցընէ, մանաւանդ իր սղարիկ աղջիկներուն հետ կ'ըլլաւորու: Առաջին թիկնապահը կ'ընթեանու թերթերու մէջ տեսնուած կարեւոր լուրերը: Չարը ինք շատ բիշ անգամ կը կարգայ լրագրի կամ դիբը: Բաւական տտեն կայ որ ձեռքը զիբը առած չէ:

Ժամը 7ին, սեղան կը նստի իր սովորական ընթերցը ընելու, ընտանեօք, որ օրուան էն մեծ ճաշն է: Երբեմն կը պատահի որ սեղանէն ժամը 9 ու կէսին 10ին կ'ընեն, խօսակցութեան երկարելուն պատճառաւ:

Ժամը 10-12 վերստին աշխատութիւն Պատկանապետի և Արտարին Գործոց նախարարի հետ:

Ճիշդ կէս գիշերուն կը պաակի:

ՃԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲՅԵՒՆ ՍԸ ԽՐԱՏՆԵՐԸ

Ճաշեցը միշտ, եթէ կարելի է, զուարթ մարդոց հետ: Խնդալն իր բնագոյն պարզ շարժում մը կը նկատուի միշտ. սըլալ է այս. ամենակարևոր պաշտօններն մին կը կազմ այն, ոչ թէ միայն միաբերը բարձրացնելով, այլ և շիջեր պնդելով, մաղձն ի բաց վանելով, արեան կենդանացուցել շրջան մը հաստատելով և մարտ-

ԳԼՈՒԽ Բ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՒՔ ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

Յօդ. 85. Ամեն ժողով և խորհուրդ պիտի ունենայ աստեանական Դիւան մը, որ կը բաղկանայ մէկ Աստեանապետ, մէկ Աստեանագրէ և երբեմն նաև Աստեանապետի և Աստեանագրի փոխանորդներէ: Ասանց ամենն ալ հարկաւ ժողովոյ անդամներն պիտի ըլլան:

Աստեանական Դիւանը տարին անգամ մը կը նորոգուի, և անդամներն անմիջապէս վերընտրուի են:

Յօդ. 86. Ասանց մեծագոյն մասի ներկայութեան Աստեան չը կրնար կազմուիլ:

Յօդ. 87. Խնդիր մը լաւ քննուելէն, և անոր վրայ ներկայ ժողովականաց կարծիքը հասկցուելէն վերջը, բռնի կը դրուի. և ձայնից առաւելութեամբ որոշում կը տրուի: Երբ ձայնից հաստատութիւն պատահի, եթէ Նախագահը ներկայ է՝ անոր կարծեաց կողմը կը հակի որոշումը. եթէ ո՛չ՝ Աստեանապետին կողմը:

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ (Շար. Նախորդ թիւէն)

Յօդ. 78. Եթէ պատահի որ բուրքուհիներն մէկը պէտք եղածէն աւելի թուով անուն գրած ըլլայ իր բուրքուհիներն մէջ, նոյն թիւն վերջը եկած անունները անբնական կ'են. նմանապէս անվաւեր կը համարուին այն բուրքուհիները՝ որոց մէջ գտնուած անունները վերին ի վար կարգաւ գրուած չեն:

Յօդ. 79. Բուրքուհեաց թուոյն կէսէն աւելի բուրքուհիներուն մէջէն՝ առաւելագոյն բուրքուհիները՝ Երեսփոխան ընտրուած են: Եւ եթէ երկու անձանց հաստատութիւն տրուած ըլլայ, երկուսոցմը ընտրուել է:

Յօդ. 80. Եթէ առաջին անգամ բուրք-

արկութեամբ առաւելութիւն չ'ստացուի, Թաւազական խորհուրդը կը ծանուցանէ առաւելագոյն բուրքուհիները անձանց անունները, և երկուսը բուրքուհիները օրինաւորապէս այն երկու անունաց վրայ կ'ըլլայ: Յօդ. 81. Ամեն Թաւազական խորհուրդ իր թաղէն ընտրուած Երեսփոխանաց անունները Պատրիարքին կը ներկայացունէ մասնաւոր տեղեկագրով մը, որուն մէջ պէտք է ճշգրիտ նշանակուած ըլլայ ընտրուածներուն անունը, մականունը, բնակութիւնը, արհեստը, և բուրքուհիութեան բոլոր պարագայները:

Պատրիարքը այս տեղեկագրերը կը ներկայացունէ Քաղաքական ժողովին, որ զանոնք քննելով կ'ստորագրէ Երեսփոխանաց ընտրութեան պայմանները:

Այսպէս ստորագրուելէ հետք, Պատրիարքը պաշտօնական կերպիւ կը ծանուցանէ Երեսփոխանաց ամեն մէկուն ըստ օրինի ընտրութիւնը, և կը հրատարակ ընտրութեան օր մը:

Յօդ. 82. Ընդհանուր ժողովը իր ա-

զուգահեռան օգնելով. ապա՝ զուգործութիւն պահանջել միշտ ձեր սեղանին վրայ: Սեղան մի՛ նստիք երբեք երբ բարկացած էք. նոյն միջոցին ինչ որ ուտէք լաւ չթուիր ձեզ, և ձեր մարտոգութիւնը կը խանգարի. սպասեցէք ձեր արհամարհան հասնող գործունէութեան: Սեղանի վրայ գզուշացէք ամեն զրգովի վիճարանութիւններէ և բանակներէ: Կին մը, օրինակի համար, որ այն վայրկեանը կ'ընարէ իւր ամուսնոյն և զաւակաց հետ վէճ մը յարուցանելու, մաղձալից կ'ընէ զանոնք և իւր անձն իսկ կը կանխապատրաստէ լիարդային հիւանդութեան մը: Վարդապետ հեղինակ մը կ'ըսէ. «Վիճարանութիւնն ճաշի ժամանակ այն ազդեցութիւնը կրնայ ունենալ ստամոքսին վրայ ինչ որ անզնապէս կ'իյնայ մը պիտի ընէր թէ կ'ընուած լինէր»:

Ճաշին անմիջապէս վերջն աշխատանքը կը խանգարէ մարտոգութիւնն: Բազումք հակառակ կարծիք ունին և կը սխալին, զի մարտոգութեան կարևոր պաշտօնի կատարումն հանդիստ կը պահանջէ: Տեսէք անասունները. ուտելէ վերջն անմիջապէս կը պահին և բնազդուն է միշտ որ կը վարէ զնոսա իրենց հարկաւոր եղածը կատարելու: Եւ չեմ խրատեր սակայն որ նոցա պէս մենք ևս պարտինք պահել, այլ կը խրատեմ նմանիլ անոնց՝ սեղանին երեսին յետոյ գոնէ ժամ մը հանդիստ աննրով հեռի գրական կամ օրէն աշխատութիւնէ: Մարդանքը ճաշին առաջ մանաւանդ յոյժ յարմարագոյն է ախորժակը զրգովու, այլ կը կրկնեմ թէ պէտք է խուսափել անտի երբ ստամոքսը կերակրօք ծանրաբեռնեալ է:

Ճաշերնի վերջացուցէք կտոր մը հացի կեղի ուտելով, որ մարտոգութեան կ'օգնէ և միանգամայն կը մաքրէ ակոսներն:

Մի՛ ուտէք երբեք ինչ որ հաճելի չէ ձեզ. մենք ևս ունինք անասնոց բնազդուն և կը մերժենք ինչ որ մեր ստամոքսին ախորժակի չթուիր: Յանրաւի է որքան մանուկ մը լաւ մեծցնելու պատճառաւ ստիպել զնա որ ամեն ինչ ուտելու վարժուի:

Եթէ տկարակազմ էք, կերէք երբ անօթութիւն զգաք, այսինքն յաճախ, այլ փոքրիկ քանակութեամբ. յամբար կերէք և լաւ ծամեցէք:

Գարշով ըմպելաց, ճաշի միջոցին պէտք է թիչ խմել թէ շատ: Արեցողք ինչ պիտի պատասխանեն թէ պէտք է թիչ ուտել և

շատ խմել. իսկ որովայնապարբք, փորձասու մարդիկ, հակառակ պիտի պնդեն թէ պէտք է թիչ խմել, մանաւանդ ճաշի ատեն, այլ շատ ուտել ըստ կարելոյն: Որո՞ց հաւատ ընծայել. յիշատի ոչ միայն և ոչ միւսոյն, զի իրենց կիրքը կը մղուրեցնէ զիրենք:

Կան փափկակազմ և հիւանդոտ ստամոքսներ որոց կծկականութիւնն տկար է, այսպիսեաց համար մի քանի պատուաւը նընդհան հետ մեծաքանակ ըմպելի ներմուծելն՝ մարտոգութեան գործողութիւնը խափանել է. այլ փոքր ինչ մաքուր ջուր կամ շրախան գինի կը բաւէ նոցա իւր կազմութիւնը:

Ընդհակառակը, ստամոքսն որչափ նըրազ հեղուկ ընդունի, այնչափ առաւել փորձու կը մարտէ. նոյն իսկ, ճաշի ժամանակ որքէ ըմպելաց բացակայութիւնն երբեմն բացորոշ պայման մը կը լինի շուտ և լաւ մարտելու:

### ՀԵՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ խռովութիւնները. — Ժննէյ ապստամբութեան օրէն ուսանողները յայտարարութիւններ գրելով են Ս. Բէթլիարայի և կը պահանջեն որ իրենց ձեռքադրուած ընկերները ազատ արձակուին: Արտփրայ վերադարձնողները կ'արտաբերեն:

Սրբազ Բեռլին. — Հակառակ Բ. Գրան հերքումին՝ Սուլթանի կեանքին դէմ գաւազարութիւնը անուշաբան է:

Երբ փաշաներ ձերբակալուած են, բայց ստորի ստորիկանութիւնը երկար ժամանակ անմարտութեան մը, և մարտային վարժութեան կարեւոր պաշտօնի մը ձեռնարկութիւնը հրամայել է:

Անգլիական պիւսեհ. — Անցեալ տարուան պիւսեհին մէջ 53,000,000 ոսկոյ բայ մը կ'այ. եթէ պատերազմը չըլտար, 15,000,000 ոսկոյ ևս աւելորդ մը պիտի զոյանար: 1908 տարուայ ծախքը 187,602,000 կը հասնուի, որուն 60 միլիոնը պատերազմին համար:

Չին. — Մեծ հրդեհ մը ծողեցաւ որ ժոյրի գարձոց կայսերական պալատը, այն պալատը որ կուս Վաւտիքի հաստատած էր իր կեդրոնատեղին: Ժննէրալ Եփուարզնի բային մէջ անհետացած է, կուս Վաւտիքի (հրամանատարը) մեծ զրծ-

Այս տարբեր տարեկան է. և բաշխման հիմն կը ընտել խրատանքի անհատի կարողութիւնը:

Յօդ. 91. Ազգային տարբեր երկու տեսակ է. մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է, և կը հաւաքուի Պատրիարքարանի կողմէն, Ազգային կեդրոնական անտուկին համար. և միւսը մասնաւոր ծախուց յատկացեալ է, և կը հաւաքուի Թաղական խորհրդոց կողմէն, Թաղական անտուկներուն համար:

Յօդ. 92. Կոստանդնուպոլսոյ մէջ ընդհանուր տարբեր բաշխման և հաւաքման եղանակը՝ Գաղաքական ժողովին մէջ կ'որոշուի, և Ընդհանուր ժողովով կը հաստատուի: Իսկ մասնաւոր տարբեր ամեն թաղ իր խորհրդոյ մէջ կ'որոշէ և կը հաստատէ:

Սոյնպէս կը անօրինուին նաև գաւառներուն մէջ Գաւառական ընդհանուր տարբեր և Թաղական մասնաւոր տարբեր:

Յօդ. 93. Գաւառներուն կողմէն Ազգային Պատրիարքարանի Մատակցի ստեղծուած մինչև ցարդ սոյնութիւնն եղած տարբեր

տարութեամբ կրցաւ սրծիլ սրտու հոնէն փոր ցտակելով: Եփուարզնի մարտի գտան. այնպէս կը կործանի թէ հրդեհին տակնը սրտու մտնել փորձած էր շուր սրտու համար և չէր կրցած:

### Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

ԱՅՅՕՐ Մահմուտական տարեկոյնի առթիւ (1319 Մահարբ) Ն. Բ. Խտիվը պաշտօնական ընդունելութիւն կատարեց Ապտինի պալատը:

ՅՈՒԻԾՍ ամեց սկիզբները Խտիվը Երուսալ պիտի մեկնի և վերադարձին Պոլիս պիտի հանդիպի, կ'ըսեն:

ՏՍՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ. — Նախորդ թուով մը ծանուցած էինք թէ Սուլթանի և Տամատ Մահմուտ փաշայի միջև համաձայնութիւն գոյացած էր, որով Տամատ Մահմուտ վերջնականապէս հաւանութիւնը տուած էր Պոլիս վերադառնալու, մինչև իսկ ամսոյս 14ին պատրաստուած էր ճամբայ ելնել:

Ճիշդ այդ օրուան նախորդ երեկոյին էր որ Սուլթանը հեռագրեց Ն. Բ. Խտիվին և զիտել տուաւ թէ Տամատ Մահմուտին առանձին վերադարձը իր հաշուին չէր դար, քանի որ իր երկու զաւակները մէկտեղ չէին վերադառնար:

Կը հաւատան թէ Գահիրէէն Աղեքսանդրի չափանաձ, Տամատ Մահմուտ յորդորած էր իր զաւակները որ միասին վերադառնան Պոլիս, բայց ասոնք բացարձակապէս մերժած էին հետեւի իրենց հօր ճամբուն, որչա՞ծ ըլլալով մեկնել Տուրքիա տը պիտի շարունակեն իրենց հողերնի պայքարը՝ իւր երկու թոռներ Սուլթանի Մէհմուտի (կայդալ «Սուլթանի Մէհմուտի թոռներուն կայը Օսմանյններուն» զոր Տամատ Մահմուտի որդիքը՝ իշխանը Ալպահադետին և Լուիֆուլլա վերջերս հրատարակեցին իրենց ստորագրութեան տակ: Սոյն կային մէկ հատուածին մէջ կ'ըսեն իշխանները:

բաշխման և հաւաքման եղանակը՝ Ընդհանուր ժողովը պիտի որոշէ, և Բարձրագոյն Գրան հանձնարարը պիտի գործադրուի:

### ԳՂՈՒԻՅ

Յօդ. 94. Առաջնորդը Գաւառական ժողովոյ նախագահն է, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ:

Իր պարտաւորութիւնն է գաւառին մէջ Ազգային Մահմանագրութեան գործադրութեանը հսկել:

Յօդ. 95. Առաջնորդը չը պիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով՝ պաշտօնին տեղէն հեռանալ. այլ գաւառին գլխաւոր քաղաքին մէջ ազգային Առաջնորդարանը պիտի բնակի, որ կը գումարուին և Գաւառական ժողովները:

Երբ Առաջնորդ մը միանգամայն և վախճայր ըլլայ, եթէ վախճը միայն մէկ օրուան ճամբայ հեռի է Առաջնորդանիստ քաղաքին՝ կրնայ երկու պաշտօնն ալ մէկտեղ վարել, երբեմն երբեմն վանքին այցելու

«Ամենայն հայրատութեամբ կրնանք «յայտարարել թէ մենք չենք պատկանելիք այն հայրենասէրներու գաւառապետներին, որոնք յետո կ'ընկրկին սպառնալիքի ու վտանգի առջև: Արդարեւ «ի՞նչ պատճառ ունէինք խանգարելու «մեր հանգստութիւնն ու ստեղծելու «մեզ համար առաջինէն շատ նուազ «լարեկեցիկ վիճակ մը»)

Եթէ իրօք իշխանները յամատին իրենց որոշմանը մէջ, Տամատ Մահմուտի կացութիւնը բաւականին զուարացած կ'ըլլայ, ասոր ալ պատճառը պարզ է:

Սակայն «Փար օ՛Սլէքսանդրի» ըստող ազդիւրէ առնելով կը գրէ թէ՛ Տամատ Մահմուտի զաւակներն ալ սկզբամբ հաւանութիւն ցոյց տուած են Պոլիս վերադառնալու բայց ոչ հիմախուրէ, թերեւ քանի մը ամիս վերջը:

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ (Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն.)

Վեհ. Կաթողիկոսը՝ ի նշան զոհուած կաթողիկոս լուսնաշ շնորհած է Անգղիայ Հայ գաղութի հոգևոր հովիւ և «Եկեղեցի» հանդէսի անօրէն-խորհրդի Արթ. Տ. Թորոս Գահանայ Զուգայեցիի, ինչպէս նաև փոքրիկ Հայոց հոգևոր հովիւ Արթ. Տ. Վասիլ շապուհ Գահանայ Գիպարեանի:

—Կ. Պոլսն կը գրեն թէ՛ Գ. Կոլոզ եպիսկոպոս Երեցեան (նախկին Առաջնորդ Երեզսոսի) իւր այցելու հովիւ Ռուսմանիս պիտի զրկուի, Ռուսմանիսոց վիճակը քննելու և սեղեկագրելու համար:

—Այնթապէն կը գրեն թէ՛ Կ. Թ. Գ. Կոլոզն մէջ՝ սեղի ունեցած է հանդէս մը՝ ի յիշատակ որբացեալ Մամուրեանի փրօֆ. Զննոր Պեղեան ըսած է, «Մամուրեան ազգին ծառայելու հաստատուն սկզբունքով ճամբայ ելաւ և գրականութեան ասպարէզին մէջ մտնելով իր առջև տեսաւ երկու ուղի —կամ մեզի համար գրականութիւն մը ըստեղծել, կամ հոն փոխադրել արդէն գոյութիւն ունեցող գրականութիւն մը: Ինք վերջին ուղին ընտրեց խեղացութեամբ, որ թերեւ նուազ գիտարին է բայց աւելի օգտա-

լուծիւն ընելով: Բայց եթէ հետաւորութիւնը օրուան մը ճանապարհէ աւելի ըլլայ, պէտք է որ վանքին մէջ իրեն փոխանորդ կարգելով, ինք քաղաքը բնակի: Սակայն հարկ եղած ժամանակը իր վիճակին ամեն կողմը այցելութեան կրնայ երթալ:

Յօդ. 95. Կոստանդնուպոլսոյ մէջ եղածին նման՝ Գաւառներուն մէջ ալ ամեն թաղ պիտի ունենայ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԿ մը, ԹԱՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ մը, և ԹԱՂԱԿԱՆ ԴԻԻԱՆԱՏՈՒՆ մը:

Նմանապէս Առաջնորդանիստ Գաղաքին մէջ պիտի հաստատուին ԿՐՕՆԱԿԱՆ և ԳԱՂԱԿԱՆ ԹՈՂՈՎՆԵՐ: Եւ Գաղաքական ժողովին անօրէնութեանը տակ՝ ԳՈՒԱՌԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ մը:

Նաև Առաջնորդարանի մէջ ԳԱՍՈՒԱԿԱՆ ԴԻԻԱՆԱՏՈՒՆ մը հաստատուելով, Առաջնորդական վիճակին բոլոր ժողովրդոց թաղական Ազգահամարի տուամբները հոն պիտի ժողովին, և Գաւառական ընդհանուր Ազգահամար պիտի կազմուի:

(Մնացեալը յաջորդ թուով)

կար: Եւ երբ կարգը եկաւ գտնուածներու ընտրութեան, ցցուց թէ ինք անհատակա նութեան և զօրաւոր սկզբունքի տէր մէկն էր: Այն ատեն Ֆրանսայի գրականութիւնն էր մեր Նեղոսը: Ինք անկէ չքշուեցաւ՝ ուրիշներու պէս, այդ դիտեց, տեսաւ վտանգը (Փարիզ ուսում առած Փրոֆէսէօր մ'է Խօսողը) և հոսանքին դէմ կեցաւ՝ առողջ գրա կանութեան մը հիմը դնելով ապագայ սե րունդին համար: Ես կը խորհիմ թէ եթէ Մամուլեան այնպէս մտածէր իր առջիկ հա սակին մէջ, ինչպէս մտածեց ետքերը, թե րևս նուազ ժամանակ պիտի տար վէպ թարգմանելու և իր ժամանակին մէկ կարեւ րոր մասն ալ պիտի յատկացնէր աշխարհ հարարի վերածելու հին բազարակիրի աշ խարհին գրականութիւնը: Առանց մոռնալու Միխիլարեաններու մատուցած ծառայութիւնը այս մասին, կը պնդենք թէ ժողովուրդը պէտք է իր ձեռքը սենեայ հասկնալ լեզ ւով Հոմերոսն ու Վիրգիլիոսը»:

— Կ'ըսուի թէ Մուշի գաշտին մէջ առանց պտակի կենակցողներու, կ'աթոզներու, այ րաթոզներու, երկուս կ'են պահողներու թիւն հետզհետէ կ'աւելնայ, թուրքին անբարոյա կան և անբարոյականացուցիչ կեանքը, և Հայուն ակամայ պանդխտացումը աս մեծ աղէտը մեր վրայ բերին: Գարեբով ընտա նեկան յարկին տակ առանձնացանք և մեր օճաղներու մօտիկ մտածելու բերդարգել ւեայներ եղանք որպէսզի պահենք տոհմային լեզուն և սովորութիւնները: Ազգային Եկեղե ցին և նախնեաց բնասնեկան մաքուր կիան քը իր բրկու զօրաւոր բազուկներ մեզ վեր բանեցին, ազգային զոյութիւնն յաւանցին: Իսկ հիմա ժողովուրդը կարծես երկուքին ալ մտա բարով ըսելու յօժար է:

— Նիւ-Եօրքէն կ'իմացնեն թէ նոր գազ րականներ ամեն օր կը հասնին հոս. ա նօթի և թշուառ Հայ անգործներու և կա րօտներու թիւը այնքան կը շատնայ, որ անոնց օգնութիւն հասցնելը բաւական զըժ արին զորք մը դարձած է:

— «Նեղուց» պայրամի առթիւ Հայոց Վեհափառ Կաթողիկոսը՝ Պարտից Մուզաֆ ֆերէատին Եազին ուղղած է ֆրանսերէն լեզուա հետազիւր մը որուն թարգմանու թիւնը հետեւեալն է.

«Թեկէրան. Իրանի ինքնակալ «Ն. Վ. Մուզաֆֆերէատին Եազին Հայն «Նեղուց պայրամին առթիւ կը փութամ շնորհակտեղ Ձերդ Արքայական Միծութիւնը, ինդրելով Բարձրեալն Աստուծմէ որ պարգեւ Ձերդ Արքայական մեծութեան և իր համայն գերդաստանին, երկար կեանք, ի փառս և ի պարծանս Իրանի և յանդարտութիւն Ձեր բոլոր հպատակներուն, որոնց համար ոգոր մած և սիրելի հայր էք դուք»:

Ի պատասխանի սոյն հեռագրին Պարտից Եազը նմանապէս ֆրանսերէն լեզուա հե ուղղած է վեհ. Կաթողիկոսին: Ահաւասիկ հեռագրին թարգմանութիւնը.

«Թիֆլիս. Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին «Սրտազին շնորհակալութիւն կը յայտ նեմ Ձերդ Օծութեան այն բարեմաղթու թեանց համար, որ ըրիք Նեղուցի առթիւ: Նոյնպէս և ես կը մաղթեմ, որ Աստուած պահպանէ Ձեր թանկագին կեանքը: Էջմի ւածին ըրած այցելութեանս յիշատակը ան մոռնանալի է ինձ»:

**ՄՈՒՉԱՅՈՒՄԻՆՏՏԻՆ**

— Պարտի թերթերն կը տեղեկանանք թէ Օռլանտը որը ու աղքատիկ տղոց յատ կացուելու համար 23000 դրուշի գումար մը գրկած է Պարտի Հայոց Պատրիարքա րանը:

— Գարակօզեան Գրիգոր Լեֆնտի ան

ցեալ շարքի Պարտի Ազգային Հիւանդանո ցի Հոգաբարձութեան Աստուծոյ կիւղակե կեան Պարտի Լեֆնտի յանձնը է այն 600 ոսկին՝ որ Գարակօզեան կտակին տոկոսը կը կազմէ, և վարչութեան որոշման համե մատ պիտի յատկանայ Հիւանդանոցի որ բանոցին, որով որբերը պիտի փոխադրուին ուրիշ օգուէտ տեղ մը, որոց մէջն քանի քանի՝ անմեղներ, խնայեալ ապրելուն հա մար, վերջերս թորակաի Հիւանդանոցին բնուած էին, և որոս համար այնքան աղ մուկ դարձաւ Պարտի և Արտասահմանի մէջ, թէ ինչո՞ւ որբերը բերուեցան գաւառներէն, որպէսզի առողջ և առջիկ վիճակի մէջ ոմանք ուսմունք և ոմանք ալ արհեստ մը սորվե ւով, իրենց ծննդավայրը վերադառնալուն կարենան իր բա մանկապարտեզուհի, վար փուհի կամ արհեստագէտ իրենց ապրուստը պատուաւորապէս հանել և հանրութեան ալ օգտակար լինիլ, և ոչ թէ զոհ գնալու հա մար:

**ՏՈՒՆԱ ՄԻԳՅԻԼՄԱՆ**  
(ԻՍՒԱՄԱԿԱՆ ՕՐԻՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ)

**Ս. ՓԱՓԱՉԵԱՆ**

Սոյն հրատարակութեան առաջին մասը Եղիպտոսական արդարութեան Գործոց Նախարարութեան կողմէն նիւթական վարձատրութեամբ գնա հատուած և Եղիպտոսի դատարաննե րուն մէջ զործածութիւնը պաշտօ նապէս ընդունուած է:

**ԲՈՎԱՆԻՆԿԱՅԻՆԻՅԻՆ**

Ընդհ. տեսութիւն ժառանգական օրինաց և ժառանգութեան իրաւանց ծագման վրայ. — Ժառանգութեան պայմանները. — Ազգականութիւն և աստիճանները. — Գերութիւն և ժա ռանգութեան հետ ունեցած կապերը. — Ժառանգութեան զրկող պատճառներ. — Մարդասպաններու ժառանգութիւնը. — Տիէթ (մարդու արեան զինը). — Ժառանգութեան մը պարտքը և պա հանջըրը. — Ժառանգորդներու կարգը իրենց աստիճաններովը:

Ժառանգութեան օրէնքին արամա գրութիւնները ուրոյն ուրոյն մեկնը ւած են: Գրքոյկին վերջը գրուած է ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը նշանակէ թէ ժառանգութեան օրինա կան բաժինները ինչպէս կը բաժնը ւին:

Երկրորդ մասը մօտ ժամանակէ լոյս պիտի տեսնէ՝ խնամակալութեան նյութի, Սպանութեան, Արեան Գնոյ վրայ ընդարձակ ծանօթութիւններով:

**ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ**  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԵՂԻՊՏՈՍԻ

**Մ. ՍՏՍՈՅՅԵԱՆ**

Իրոնի հանրածանօթ զրամատունը, այս անգամ՝ անեցաւ իւր Եղիպտոսի զործակալն ալ, Տ. Միկրտիչ Սոսոյեան, որ իւր հրատարակչին ջրոց տուած պարկեշտ զործունէութեամբն ամե նուս վատահութիւնը կը վայելէ:

Սոյն զործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Իրոնի բաղա քապիտուլեմենէն պաշտօնապէս վա ւերացուած փոխանորդազրի համա ձայն, պիտի կատարէ Պանդ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ զրամական և ֆուէտի ֆոնտիլէի, վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու զործողութիւններ, զանձումներ, վնաս կան ճնշին զրամարի մը խնայողու թեամբ ձեռք կը բերուի քիչ ասանէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակա հանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նեւ պառի վրայ փոստատարան Ռարթաքիի զրատնեակը:

Թղթակցութիւն և կամ դրամ զըր կել հետեւեալ հասցէին:

Մ. ՍՏՍՈՅ Ե Ա Ն  
Ի ԳԱՀԻՐԷ

**Ա. Զ. Դ.**

Շատերու կողմէ յայտնուած փա փաղքի մը զոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրտութիւն մը ըն ծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Շա րա Ապա-էլ-Ալիզի սկիզբը Պ. ԿԱՐԱ ՊԵՏ ԵՐԶՆԻԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գրթ-Պէյ փողոցի ծայրը և թը րամվէյներու կայարանին մօտ ծխա վաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՊԵՆՆԻ քով:

**ՊԵՆԱԿԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.**

ՍՄԵՐԿԵԱՆ ԳԵՐՁԱԿԵՐ  
ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿՆԱՆՑ  
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ  
Ապրիլի մեծ պողոտայի վրայ Տոյրալի Սանիլիի դիւնացը, նախկին Ելեկտրական գործիներու վաճառատները:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարա րենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք զոհացնել մեզ զիմոյ Պատ. յաճախողները, զարմի մաք րութեան, զիններու շափաւորութեան և ճշգրտագնութեան կողմէն:

Մեր զործատեղոյն մէջ կ'ուան րուին նաև ձեւադիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարե ւազործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր զործատեղին:

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միւրիկոն». — Թ. Ս. Փափագեանի

**Տ Պ Ա Ր Ա Ն**  
**Ի ԳԱՀԻՐԷ**  
Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՅԱՄԻ ԺԵՇԴ ԴԻՄԱՑ  
**ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ**  
**ԹՈՒԳՈՍ Ս. ՓԱՓԱՉԵԱՆ**  
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա րակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցիտոմներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրազրեր, կանոնադիրներ, նամակազրուիւններ, տրահարաններ, հաշուեցույցակներ ևն.:  
Յանձնարարութիւններ կը կատարուին փոքրով, ամենայն խնամով և ճաշակատր սպազորութեամբ:  
**ՉՍՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ**